

## Վահե Ավետիսյան

### ԱՆՏԻՈՔԻ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽՅԱՐԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1153-1161 թթ.

**Ռայմունդ Պուատյե, Ինաբի (Էննեհ) Ճակատամարտ, Մանուել I Կոմնենոս,  
Ռենո դե Շատիյոն, Թորոս II, սահմանային բերդեր, բյուզանդական գերակայություն,  
հայ-լատինական մերձեցում, ուղղափառ և լատին հոգևորականություն**

1149 թ. հունիսի 29-ին Հյուսիսային Սիրիայի Հարիմ ամրոցից ոչ հեռու գտնվող Մուրադի (Մարրաթայի) ակունքների մոտ տեղի ունեցած ճակատամարտը պետք է վերջ դնե Անտիոքի դուքս Ռայմունդ Պուատյեի (1136-1149 թթ.) և Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դին Ջենգիի (1146-1174 թթ.) հակամարտությանը: Վերջինս պաշարել էր Օրոնտ գետի արևելյան մասում դքսության միակ հենակետ Ինաբ (Էննեհ) ամրոցը: Սակայն Ռայմունդի զորքերը թույլ տվեցին մի շարք սխալներ և կատարյալ պարտություն կրեցին: Դուքսն անձամբ սրախողխող արվեց: Անտիոքը կանգնած էր շրջապատման վտանգի առաջ, երբ քաղաքին օգնության է հասնում Երուսաղեմի թագավոր Բալդուին III-ը (1143-1162 թթ.): Նուր ադ-Դինի բանակը, պատրաստ չլինելով երկարատև պաշարում իրականացնել, նահանջում է դքսության սահմաններից<sup>1</sup>:

Ռայմունդի մահից հետո Անտիոքում իշխանությունը անցնում է նրա այրի Կոնստանցիայի ձեռքը. նրանց ավագ որդի Բոհեմունդը ընդամենը հինգ տարեկան էր: Հայտնվելով բոլոր կողմերից ակտիվացած հարևանների աքցանում՝ Անտիոքը ստիպված էր արագ կարգավորել գահաժառանգության հարցը, առավել ևս, որ Կոնստանցիան պատրաստվում էր դքսության գործերը վստահել Բյուզանդիայի կայսր Մանուել I Կոմնենոսին (1143-1180 թթ.)<sup>2</sup>:

Ստեղծված իրավիճակում դքսության լատինական դիմագիծը պահպանեցին դեռևս Ռայմունդ Պուատյեի կառավարման օրոք Անտիոքում հաստատված ֆրանսիացի ասպետները, որոնցից առավել հայտնի էր Շամպայնի ազնվական

---

<sup>1</sup> Sté Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, Recueil des historiens des croisades (այսուհետ՝ RHC), Hist. occidentaux, t. I, Paris, 1844, p. 771-775,

1975, , 1982, . 27,

Գրիգոր Երեց, Մատթեոս Ուռշայեցու ժամանակագրության շարունակությունը, Մատթեոս Ուռշայեցու ժամանակագրության ընդարձակ հրատարակություն, խմբ. Բարթիկյան Հ., Երևան, 1991, էջ 437,

1859, . 134-135, Ibn-Alatyr, Extract de la chronique Kamel-Altevarykh, RHC, Hist. orientaux, t. I, Paris, 1872, p. 476, , 2001, . 367:

<sup>2</sup> Կայսրն առաջարկում էր Կոնստանցիային ամուսնանալ իր մահացած քրոջ ամուսնու՝ տարեց Իոանն Կեսարի հետ: Sté

. 133, 135, 196, Chalandon F., Les Comm nes, հատված. թարգ. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 170:

տներից մեկի ներկայացուցիչ Ռենո (Ռայնալդ, Ռընադտ) դե Շատիյոնը: Ռայնոնը Պուատիեյի հետ մասնակցելով Նուր ադ-Ղիմի դեմ պատերազմին՝ նա մեծ համբավ էր ձեռք բերել. մահմեդականները Ռենոյի անունը հիշատակում են դեռևս 1149 թ. ճակատամարտում<sup>1</sup>: Անտիոքում եղած ժամանակ Ռենոն գերվում է Կոնստանդիայի զեղեցկությամբ ու 1153 թ. գարնանը անուսնության առաջարկ անում իշխանուհուն: Բալդուին III-ը, հաշվի առնելով Անտիոքի վիճակը, տալիս է իր համաձայնությունը, որի հետևանքով Ռենոն Բոհեմունդի անչափահասության ընթացքում հռչակվում է Անտիոքի ռեգենտ (խնամակալ)<sup>2</sup>:

Նոր կառավարչի հիմնական խնդիրը հարևան մահմեդականների առաջխաղացումը կանգնեցնելն էր: Նուր ադ-Ղիմի որոշակիորեն թուլացած ճնշումը շատ արագ փոխարինվում է Իկոնիայի սուլթանության ձեռնարկած հարձակումներով, որոնցում շահագրգռություն էր ցուցաբերում նաև Կոստանդնուպոլիսը՝ փորձելով թուրքերի միջոցով ընկճել կայսրության գերակայության դեմ պայքարող Անտիոքին և Կիլիկիայի Ռուբինյան իշխան Թորոս II-ին (1145-1169 թթ.): Սուլթան Մասուդ I-ը (1116-1156 թթ.) 1153-1154 թթ. Բյուզանդիայի դրդմամբ մի քանի անգամ արշավում է Կիլիկիայի հյուսիս, բայց որևէ հաջողության չի հասնում: 1154 թ. գարնանը նա որոշում է իր որդի Յաղուբի գլխավորությամբ 3 հազարանոց զորագունդ ուղարկել Անտիոքի դեմ: Այս ուժերը Անտիոքի Դեմակ կոչվող վայրում բախվում են Բաղրաս ամրոցից ելած Տաճարական միաբանության ասպետների հետ, որոնց օգնում էր Թորոսի եղբայր Ստեփաննի հայկական զորախումբը: Նրանք կարողանում են ջախջախիչ պարտության մատնել թուրքերին և ցրել նրանց զորքը<sup>3</sup>:

Այս հաղթանակները ստիպում են Բյուզանդիային ամեն ինչ անել հայ-անտիոքյան մերձեցումը կանխելու ուղղությամբ, մանավանդ որ այդ ուժերի հաշվեկշիռը աստիճանաբար թեքվում էր դեպի հունական տիրույթների վրա հավակնություններ ունեցող Թորոսի կողմը: Այդ նպատակով կայսրությունը սկսում է ուշադրություն դարձնել Անտիոքի ազաի ու կռվարար իշխան Ռենոյի վրա: 1153-1156 թթ. ընթացքում կառավարելով հիմնականում հույներով և հայերով բնակեցված Անտիոքում՝ նա չէր կարողացել թոթափել իր նախկին դքսերից անուղղակիորեն ժառանգած վասալությունը Մանուել Կոմնենոսից: Այս բացը Ռենոն լրացնում էր Անտիոքի լատին պատրիարքի ու հոգևորականության վրա գործադրած ճնշումներով<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Ibn-Alatyr, Extract de la chronique Kamel-Altevarykh, RHC, Hist. orientaux, t. I, p. 476:

<sup>2</sup> Տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 802:

<sup>3</sup> Տե՛ս Tournebize F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1910, p. 177, Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 447-449:

<sup>4</sup> Եկեղեցու հարստությանը տեր դառնալու մոլուցքով տարված՝ նա պատրիարքին նույնիսկ ֆիզիկական տանջանքների էր ենթարկում՝ ստիպելով վերջինիս ժամանակավոր տեղափոխվել Երուսաղեմ: Տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Historia occidentaux, t. I, p. 816-817, , . 200:

Կայսրը Թորոսին զսպելու և նրա դեմ Ռենոյին տրամադրելու համար վերջինիս հորդորում է (ավելի ճիշտ հրամայում է) ներխուժել անվանապես իրեն պատկանող Կիլիկիա ու պատժել ըմբոստացած իշխանին: Դրա դիմաց Մանուելը խոստանում էր արշավանքի ծախսերը վերցնել իր վրա:

Ռենոն սկզբում արդարացնում է կայսեր բոլոր հույսերը. նա իր հպատակների հետ 1155/6 թ. արշավանք է կազմակերպում դեպի Թորոսի տիրույթներ: Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ Ռենոյի և Թորոսի միջև կային սահմանային որոշ ամրոցների, մասնավորաբար Բաղրասի, Դարպասկի և Համայի պատկանելության հետ կապված տարածայնություններ<sup>1</sup>: Այդ ամրոցները գտնվում էին Դաշտային Կիլիկիայի ու Անտիոքի դքսության սահմանագլխին և ստրատեգիական նշանակություն ունեին: Թորոսը օգտելով Ռայմունդի ու հույների անհաջողություններից՝ փորձում էր տարածել իր ազդեցությունը դրանց վրա և չէր պատրաստվում առանց պայքարի զիջել դրանք Անտիոքին: Ռենոն, իր հերթին, ցանկանում էր Բաղրաս-Դարպասկ շրջանը վերահանձնել դրանց մասխկին տեր և Անտիոքի դաշնակից Տաճարական միաբաններից<sup>2</sup>: Երկու կողմերի բանակները բախվում են Ալեքսանդրեթի ու Բաղրասի միջև: Հայկական աղբյուրներն այս բախումը չեն արձանագրում: Ճակատամարտին տեղյակ են Գիյոն Սուրացին և Բար Հեբրեոսը, որոնք հաղթող են հռչակում ֆրանկներին<sup>3</sup>: Միքայել Ասորին նշում է, որ կռվի ընթացքում կողմերը տվել են բազմաթիվ զոհեր, և Ռենոն Անտիոք է վերադարձել գլխիկոր<sup>4</sup>: Ավելի հավանական է թվում առաջին տարբերակը, եթե նկատենք, որ նույնիսկ, ըստ Ասորու, հայերը ստիպված են լինում հակառակորդի հետ պայմանագիր կնքել և Տաճարականներին հանձնել խնդրո առարկա բերդերը: Ճիշտ է, վերջիններս երդվում են ցանկացած ժամանակ օգնություն ցույց տալ նրանց: Այսպիսով, կարելի է փաստել, որ չնայած Թորոսն ու Ռենոն ընդհարումներից հետո համաձայնության են եկել, այնուամենայնիվ ճակատամարտի հետևանքով միաբանները հիմնվել են Հյուսիսային Ասորիքի ու Կիլիկիայի սահմաններին՝ ապահովելով դքսության որոշակի առավելությունը Ռուբինյանների նկատմամբ<sup>5</sup>:

Նշված աղբյուրներում և ուսումնասիրություններում<sup>6</sup> Ռենոյի հարձակումը թվագրվում է 1155/56 թ-ով: Սակայն Յաղուբի դեմ Ստեփանեի և Տաճարականների համագործակցությունը կարելի է դիտարկել նաև որպես հայ-անտիոքյան

<sup>1</sup> Stéu Deschamps P., *Les Châteaux des Croisés en Terre Sainte*, t. III, *La Défense du comté de Tripoli et la principauté d'Antioche*, Paris, 1977, p. 65-71, Claude C., *La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, p. 141, 144, 149:

<sup>2</sup> Stéu Michel Le Syrien, *La chronique*, RHC, Doc. arméniens, t. I, Paris, 1869, p. 349, Bar Hebraeus, *The chronology of Gregory Abu'l Faraj*, trans. A. Wallis Budge, Oxford, 1932, p. 282-283:

<sup>3</sup> Stéu Willermi Tyrensis Archiepiscopi, *Historia rerum in partibus transmarinis gestarum*, RHC, Hist. occidentaux, t. I, p. 834-835, Bar Hebraeus, *The chronology of Gregory Abu'l Faraj*, p. 282-283:

<sup>4</sup> Stéu Michel Le Syrien, *La chronique*, RHC, Doc. arméniens, t. I, p. 349:

<sup>5</sup> Stéu Շեվալիե Մարի-Աննա, Կիլիկիան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երևան, 2007, էջ 91:

<sup>6</sup> Stéu Schlumberger G., Renaud De Chatillon, Paris, 1898, p. 63-64, Chalandon F., *Les Comnènes*, քարգ. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 176-177, Grousset R., *Histoire des croisades et du royaume franc de Jérusalem*, t. 2, Paris, 1935, p. 334-335:

դաշինքով նախատեսված պարտավորությունների կատարում: Նման պարագայում եզրակացությունն այն է, որ Ռենոյի բախմանը թորոսի հետ նախորդել է 1154 թ. Անտիոքի Դեմակի մոտ սելջուկների հետ տեղի ունեցած ճակատամարտին<sup>1</sup>: Սա ավելի տրամաբանական է հաշտության պայմանների տեսանկյունից, բայց հակասում է աղբյուրներում տեղ գտած ժամանակագրությանը: Բացի այդ, մինչև սեփական հարաբերությունների պարզաբանումը նրանք կարող էին մահմեդականների դեմ համատեղ հանդես գալ:

XII դ-ում ինչպես ամբողջ Մերձավոր Արևելքում, այնպես էլ Կիլիկիայիում և Անտիոքում իրադարձությունները շատ արագ էին փոփոխվում. նախկին անհաշտ թշնամիները դառնում էին դաշնակիցներ և հակառակը: Թորոսին հաղթելով՝ Ռենոն անցնում է նրա կողմը և զենքն ուղղում իր սյուզերենի դեմ: Դրա պատճառը, հավանաբար, Մանուելի կողմից տրված խոստումը չկատարելն էր. «Կայսրը Ռենոյին չէր ընդունում..., այլ ընդհակառակը, վախեցնում էր բազմաթիվ սպառնալիքներով, նա էլ որոշեց իրեն անհրաժեշտ գումարը այլ կերպ վերցնել...»<sup>2</sup>: Բայց Ռենոյին Բյուզանդիայի դեմ կարող էր տրամադրել նաև Թորոսը, որը հարևանին Կիլիկիայից հեռու պահելու նպատակով կարող էր նրան հրապուրել Կիպրոսի հարստությամբ:

Այսպես, Անտիոքի խնամակալը 1156 թ. հարձակվում է բավական անպաշտպան Կիպրոսի վրա: Նա ոչնչացնում է բոլոր նրանց, ովքեր համարձակվել էին իր դեմ սուր բարձրացնել, չի խնայում մուսուլման երեխաներին ու կանանց, թալանում է եկեղեցական ունեցվածքը և տամջամահ անում ուղղափառ հոգևորականությանը: Յետաքրքիրն այն է, որ այս իրադարձությունը նկարագրող աղբյուրների մի մասը չեն հիշատակում Թորոսի անունը<sup>3</sup>, իսկ մյուսները հաղորդում են, որ Ռենոն այդ արշավանքը կատարել է նրա սադրանքով և Թորոսը ևս նրա հետ նավարկել է կղզի ու մասնակցել թալանին, մարդկանց և հույն կղերականների նկատմամբ իրականացվող նվաստացումներին՝ այդ ամենը փորձելով պատճառաբանել բյուզանդացիների հանդեպ կուտակված վրեժխորությամբ<sup>4</sup>:

Պետք է կարծել, որ հայկական օգնություն Ռենոյին, այնուամենայնիվ, եղել է, սակայն Թորոսի անմիջական մասնակցությունը անորոշ է մնում, քանի որ Սուրացին այդ մասին բնավ չի հիշատակում: Ռենոյի ու Թորոսի անձնական բարեկամության, Անտիոք-Կիլիկյան հակամարտության խաղաղ ավարտի մասին է վկայում նաև 1156 թ. դեկտեմբերի 9-ին Անտիոքում ասորական եկեղեցու բացման առիթով<sup>5</sup> Թորոսի ներկայության փաստը:

<sup>1</sup> Տե՛ս , . 52, , 1991, . 129. 131: 50-70- XII ,.

<sup>2</sup> Տե՛ս , . 196:

<sup>3</sup> Տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 834-835, , . 196-197 հմմտ. Bar Hebraeus, The chronology of Gregory Abu'l Faraj, p. 284:

<sup>4</sup> Տե՛ս Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 465 հմմտ. , . 97, Michel Le Syrien, La chronique, RHC, Doc. arméniens, t. 1, p. 350:

<sup>5</sup> Տե՛ս Պապիկեան Ա., Հայերը և խաչակիրները, «Հանդես Ամսրոթայ», (այսուհետ՝ ՀԱ), Կիեննա, 1964 թ., N 10-12, էջ 529-530, Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, t. 2, p. 335:

Անտիոքի դքսության հետ փոխհարաբերությունների ամրապնդումը տեղի էր ունենում հայ-լատինական ընդհանուր մերձեցման շրջանակներում: Այսպես, 1157 թ. աշնանը Թորոսն ընդառաջ գնաց Շեյզարի դեմ հարձակում իրականացնելու երուսաղեմի թագավորի հրավերին և մեկնեց Անտիոք, որտեղ ընդունվեց մեծ շուքով ու մասնակից դարձավ ձեռնարկվող արշավանքին<sup>1</sup>:

Վերջին դեպքերը պարզ ցույց են տալիս Բյուզանդիայի դիրքերի թուլացումը տարածաշրջանում և ընդհանրապես կասկած հարուցում կայրության նկրտումների հանդեպ Արևելքում: Մանուել I-ը այլևս չէր կարող սպասել: 1158 թ. նա, անձամբ բանակի գլուխ անցած, շարժվում է Արևելք: Արշավանքի գլխավոր նպատակը նույնն էր. Թորոսի, ով հասցրել էր իր իշխանության տակ առնել Կիլիկիայի գրեթե բոլոր քաղաքները, և Անտիոքի վերահպատակեցումը<sup>2</sup>:

Բյուզանդական բանակը 1158 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին առանց մեծ դժվարությունների վերագրավեց Լոնգինիադան, Թիլը, Անարզաբան, Տարսոնը, Մամիստիան, Ադանան, որի հետևանքով Կիլիկիան նորից անցավ բյուզանդացիների իշխանության ներքո: Կայսրը մտադիր էր Մամիստրայում ձմեռելուց հետո իջնել Անտիոք և պատժել Ռենո դե Շատիյոնին, սակայն Անտիոքի ռեգենտը, լսելով Մանուել Կոմնենոսի արագ հաղթանակների լուրը և գիտակցելով, որ դժվար թե կարողանա դիմակայել նրան, մի քանի ենթակաների ուղեկցությամբ ինքն է շտապում հանձնվել կայսեր ողորմածությանը: Նա Մանուելին ճանաչում է որպես Անտիոքի տիրակալ, պարտավորվում նրան զորք տրամադրել ու Անտիոքի լատին պատրիարքին փոխարինել հույն ուղղափառ պատրիարքով<sup>3</sup>: Ամեն ինչ Կիլիկիայի և Անտիոքի համար կարող էր դասավորվել ծայրաստիճան դաժան, եթե ժամանակին Մամիստրա չժամաներ երուսաղեմի թագավոր Բաղդուին III-ը: Նա իր առաքինությամբ կարողանում է մեղմել Մանուելի բարկությունը, ապա Ռենոյի, Տաճարականների և այլ ասպետական միաբանների հետ բարեխոսում է Թորոսի համար: Վերջինս մեծ նվերներով գալիս է կայսեր մոտ ու խոնարհաբար ճանաչում նրա գերիշխանությունը, հրաժարվում Կիլիկիայի բերդերի վրա ունեցած իր բոլոր հավակնություններից: Մանուելը հավատում է նրա երդմանը և շնորհում սեբաստոսի տիտղոս<sup>4</sup>:

<sup>1</sup> Ձեռնարկն ի վերջո անհաջողության մատնվեց Շեյզարի պատկանելիության շուրջ խաչակիրների մեջ ծագած վեճի պատճառով. ինչպես, միշտ դրան ցանկանում էր տիրել Ռենոն: Sten Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 847-851:

<sup>2</sup> Sten Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 192, 195-196, Vahram D'Edesse, Chronique Rimée, RHC, Doc. arméniens, t. I, p. 504, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, Մանր ժամանակագրություններ, (այսուհետ՝ Մժ), XIII-XVIII դդ., հ. 2, կազմ. Հակոբյան Վ., Երևան, 1956, էջ 102, Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկիայի Հայաստանը ժժ դարի 30-70-ական թթ, Երևան, 1988, էջ 205:

<sup>3</sup> Sten Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 859-863, Chalandon F., Les Comnènes, թարգ. L. Տեր-Պետրոսյանի, Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 183:

<sup>4</sup> Sten Vahram D'Edesse, Chronique Rimée, RHC, Doc. arméniens, t. I, p. 505, Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 465-467, Հեթում պատմիչի ազգաբանական աշխատությունները, Մժ XIII-XVIII դդ.,

1159 թ. գարնանը Մանուել Կոմնենոսը մեծ հանդիսավորությամբ մտնում է Անտիոք<sup>1</sup>, որտեղից հունալատինական մեծ արշավանք է կազմակերպվում Նուր ադ-Դինի դեմ: Դրան իրենց բանակներով մասնակցում էին նաև Տաճարականները, Ռենո դե Շատիոնը ու Թորոս II-ը: Քրիստոնյաների միացյալ բանակը ճամբար խփելով Հալեպից ընդամենը 40 կմ հեռավորության վրա՝ պատրաստվում էր խորտակել Նուր ադ-Դինի էմիրությունը, երբ իրադարձությունների անսպասելի շրջադարձ կատարվեց. կայսրը Կոստանդնուպոլսից հրատապ գրություն ստանալով կամ ըստ էության խուսափելով արյունահեղությունից՝ 1159 թ. մայիսին պայմանագիր կնքեց արաբների հետ<sup>2</sup> ու Կիլիկիայով և Փոքր Ասիայով վերադարձավ Կոստանդնուպոլիս<sup>3</sup>:

Կասկածից վեր է, որ կայսրը Կիլիկիան և Անտիոքը հպատակեցնելով, այլևս չէր մտահոգվում խաչակիրների ճակատագրով: Հալեպի գրավումից հետո իրական չէր հեռավոր Կոստանդնուպոլսից հնազանդություն պահանջել հիմնական հակառակորդից ազատված լատիններից: Կայսերական քաղաքականության առանցքային դրույթներն արձանագրված են դեռևս Գրիգոր Երեցի ժամանակագրությունում. «...ստույգ է, որ կայսրը բավարարվեց պրինցին հնազանդեցնելով և Թորոսի խլած շրջաններին վերստին տիրելով՝ նա դա հաղթանակ համարեց...»: Այս տեսկետը հետագայում հիմնավորեց հայտնի բյուզանդագետ Շալանդոնը<sup>4</sup>:

Բյուզանդիայի գերակայությամբ սկզբում ինչ-որ չափով պահպանվում էր ստեղծված հարաբերակցությունը Կիլիկիայի ու Անտիոքի միջև, քանի որ Մանուելը իր ուշադրությունը չէր շեղում Արևելյան գործերից՝ ձգտելով և՛ Թորոսին, և՛ Ռենոյին ներգրավել կայսրության ռազմական ձեռնարկումներին: Այդ նպատակով Մանուել I-ը 1160 թ-ի վերջերին Պաղեստին է ուղարկում Հովհաննես Կոնտոստեփանոսին, որին հանձնարարված էր Իկոնիայի դեմ պայքարում ապահովել Բալդուին III-ի օժանդակությունը: Հովհաննեսը կայսրական հրամանով արշավանքին պետք է մասնակից դարձներ նաև Անտիոքի ասպետներին՝ Ռենոյի ու կիլիկյան ուժերը՝ Թորոսի,

---

h. 2, էջ 102, , , . , 1974, . 99-100, , , . 206:

<sup>1</sup> Տե՛ս , , . 1, . 207,

, . 1, . 137-139:

<sup>2</sup> Տե՛ս Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 467-471, - , - , 2009, . 251-252, Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 863-864: Բյուզանդիայի համար այդ պայմանագիրը նպաստավոր էր այնքանով, որ Մանուել I-ին հաջողվեց Նուր ադ-Դինին դուրս բերել կայսրության ամենավտանգավոր թշնամիներից մեկի՝ Իկոնիայի սուլթանության դեմ: Արդեն 1260 թ. նա հարձակվեց Փոքր Ասիայի վրա և գրավեց Ռապանը, Քեսունը, Մարաշը: Տե՛ս Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանն ու Սիրիան XII դարի 40-70-ական թթ., ՊԲՀ, Երևան, 1986, N 2, էջ 124:

<sup>3</sup> Տե՛ս , , . 1, . 139, , . 210-211, Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 471:

<sup>4</sup> Տե՛ս Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 469, Chalandon F., Les Comnène, Études sur l'empire Byzantin au XI et au XII siècles, Jean II Comnène (1118-1143), et Manuel I Comnène, (1143-1180), Paris, 1912, p. 454-455, Պապիկեան Ա., Հայերը և խաչակիրները, ՀԱ, Վիեննա, 1964 թ., N 10-12, էջ 537-538:

Տիգրանի, Քրիստափորի և Կոկովասիլների գլխավորությամբ: Այդ բանակը հաջորդ տարի մտնում է սուլթանության հարավային տարածքներ և փայլուն հաղթանակ տանում թուրքական քսաներկուհազարանոց զորքի դեմ: Կոնոստեփանոսը մեծ փառքով ու ավարով վերադառնում է Բյուզանդիա<sup>1</sup>:

Թորոսի և Ռենոյի համագործակցությունն ավարտվում է շատ անսպասելի մի իրադարձությամբ. իր լուսեններից տեղեկանալով, որ Մարաշի, Տլուքի ու Եդեսիայի միջև ընկած տարածքները բավական անպաշտպան են՝ Ռենոն հավաքում է մեծ զորք և ասպատակում այդ հողերը: Նրան հաջողվում է ձեռք գցել մեծ քանակությամբ հարստություն, գերել տեղի շատ հայ գյուղացիների: Սակայն ետ դարձի ճանապարհին 1160 կամ 1161 թ. նոյեմբերին նրա դեմ է դուրս գալիս Նուր ադ-Դիմի ազգական Մեջդ Էդ-դին իբն Դայեն և փախուստի մատնում անտիոքյան ասպետներին: Ռենոն մինչև վերջ մնում է կռվի դաշտում ու գերի ընկնում<sup>2</sup>: Ցուցաբերած քաջության և հանդգնության պատճառով նրա անտիոքյան կառավարունը ստացավ «չարիք ֆրակների ու սասափ մահմեդականների համար» հայտնի որակումը:

Ռենոյի ավազակային հարձակման մասին Գրիգոր Երեցը հաղորդում է<sup>3</sup>. «Անտիոքի պրինցը հարձակվում է Տլուք գավառի Ծով բերդի վրա: Շրջակայքում ասպատակություն սփռելուց հետո նա գերեվարում է այդ սահմանների թուրքմեններին<sup>4</sup>: Նա ուներ 1000 հեծյալ, հետևակ և զուսակին հետևողներ: Նրանց դեմ դուրս եկավ նախապես պատրաստված 10 հազար մահմեդական զորք...: Մոտ 400 հոգի կոտորելուց և մնացածին փախուստի մատնելուց հետո իր 30 ձիավորների հետ գերվեց նաև Ռենոն, որին ծաղր ու ծանակի ենթարկելով՝ Մեջդը տարավ Չալեպ»:

Եթե Ռենոյի գերությունը դիտարկենք քաղաքական նրբերանգ ունեցող ամուսնական իրողության տեսանկյունից, ապա Անտիոքի կառավարչի ծախորդության ավելի իրական ժամանակը 1161 թ. նոյեմբերն է: Այսպես, Մանուել Կոմնենոսը 1161 թ. խնդրել էր Տրիպոլի կոմս Ռայմունդ II-ի (1137-1152 թթ.) դստեր ձեռքը: Սակայն, հավանաբար, ստանալով Ռենոյի գերության մասին լուրը՝ հարսնացուի անառողջության պատրվակով իր ներկայացուցիչներին ետ է կանչում Տրիպոլիից և նոր առաքելություն հղում Անտիոք, որին հաջողվում է ձեռք բերել Մանուելի ու Ռայմունդ Դուլատյեի դուստր Մարիա Անտիոքացու ամուսնության համաձայնությունը<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս , , . 218-220:

<sup>2</sup> Տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 868-869:

<sup>3</sup> Տե՛ս Գրիգոր Երեցի շարունակությունը, էջ 477:

<sup>4</sup> Պապիկյանը հստակ ցույց է տվել, որ նա կարող էր միևնույն ժամանակ գերել ում որ պատահեր, անկախ նրանց ծագումից: Տե՛ս Պապիկյան Ա., Չայերը և խաչակիրները, ՉԱ, Վիեննա, 1965 թ., N 1-3, էջ 101:

<sup>5</sup> Տե՛ս Willermi Tyrensis Archiepiscopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. I, p. 872-876, Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier, par L. de Mas-Latrie, Paris, 1871, p. 17-18, , , . 229-233, , . 1, . 147.

Այս հաշվարկի իրականությունն դառնալու դեպքում Անտիոքը կհայտնվեր անմիջապես Բյուզանդիայի հսկողության ներքո, քանի որ Ռայմունդի այրի Կոնստանցիան Անտիոքի կառավարիչ հռչակվելու դիմաց պատրաստ էր անգամ հպատակվելու Մանուելին<sup>1</sup>: Սակայն Անտիոքի պատրիարքը և բարոններն անցնում են օրինական ժառանգորդ, երիտասարդ Բոհեմունդի կողմը և խափանում Բյուզանդիայի ծրագրերը:

Փաստորեն, Ռենո դե Շատիյոնի կարճատև կառավարման ընթացքում Անտիոքի դքսության և Կիլիկիայի միջև դիրքերի էական փոփոխություն տեղի չունեցավ: Իշխանության հենց սկզբում Ռենոն ետ բերեց ստրատեգիական նշանակության սահմանային հենակետերը՝ գրկելով Թորոսին Անտիոքի նկատմամբ առավելության հասնելու հնարավորությունից, որն ընձեռնվել էր XII դ-ի 40-ական թթ. վերջում Ռայունդ Պատյեի ու Մանուել I-ի ունեցած դժվարությունների հետևանքով: Երկու հարևանների միջև ձևավորված հավասարակշռությունը պայմանավորում էր նաև Բյուզանդիայի գերակայությունը: Չնայած և՛ Ռենոն, և՛ Թորոսը պարբերաբար ընդվզում էին և նույնիսկ զենքի դիմում դրանից ազատվելու համար, բայց կայսրության հզորությունը ստիպում էր վերջիններիս ամեն անգամ ընդունել նոր վասալական կախվածություն, որով կարծես կարգավորվում էր նրանց իրավասությունների ոլորտը: Այնուամենայնիվ, Բաղրասի շրջանին տիրելը Անտիոքին հնարավորություն էր տալիս պատեհ առիթի դեպքում փորձելու շոշափելի առավելության հասնել հյուսիսային ուղղությամբ: Դա նկատելի է Ռենոյի վերջին անհաջող ձեռնարկի ժամանակ: Այդ տարածքի կարևորությամբ էլ պայմանավորված՝ Բաղրասի խնդիրը հետագայում ևս լուրջ տարածայնությունների առարկա դարձավ Կիլիկիայի և Անտիոքի միջև:

**Վահե Ավետիսյան, Անտիոքի դքսության և Կիլիկյան Յայաստանի փոխհարաբերությունները 1153-1161 թթ** – Օգտվելով Ինաբի մոտ 1149 թ-ին Անտիոքի դքսության կրած պարտությունից՝ Կիլիկյան Յայաստանի իշխան Թորոս II-ը (1145-1169 թթ.) հավակնություններ սկսեց ցուցաբերել ռազմավարական նշանակության սահմանային բերդերի նկատմամբ: Սակայն Անտիոքի նոր կառավարիչ Ռենո դե Շատիյոնը (1153-1161 թթ.) արագ վերականգնեց կորցրած դիրքերը: Այդ պայմանական հավասարակշռության մեջ երկու երկրները փորձեցին համատեղ ուժերով թոթափել Բյուզանդիայի գերակայությունը, որը դրդեց Մանուել I-ին (1143-1180 թթ.) կայսրին արշավանք ձեռնարկել ու ապստամբներին վերստին ենթարկել կայսրական գերիշխանությունը: Բյուզանդական ներկայությունը կարծես կարգավորում էր ազդեցության ոլորտները Անտիոքի և Կիլիկիայի միջև, որոնք էական փոփոխություններ չկրեցին Ռենոյի կառավարման ընթացքում:

---

<sup>1</sup> Stéu Michel Le Syrien, La chronique, RHC, Doc. arméniens, t. I, p. 358.

**Ваге Аветисян, Расстановка позиций между Антиохийским княжеством и Киликией в 1153-1161 гг. –**

1149 -

II (1145-1169 .)

(1153-1161 .),

I- (1143-1180 .)

**Vahe Avetisyan, The location of positions between the principality of Antioch and Cilicia in 1153-1161** – Taking advantage of the defeat of principality of Antioch at the battle of Inab, the lord of Armenian Cilicia Thorus II (1145-1169) started to dispute the question of owning borderline castles which were of strategic importance. But the new regent of Antioch Raynald of Châtillon (1153-1161) soon reinstated the lost positions. In this conditional balance the neighbors jointly tried to get rid of the Byzantine suzerainty which forced the Emperor Manuel I 1143-1180 to organize a campaign against them and restore vassalage among the rebel. The Byzantine hegemony defined the spheres of influence between the Antioch and Cilicia, which didn't undergo noticeable changes during the reign of Raynald .

*Վահե Ավետիսյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ*

